



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Աշուածին Կարժարավաները ճաշկերովզթու ՄԸ ԿԸ ՊԱՏՈՒԵԼ ԿԵՅԱՓԱԼ  
ՅԱՅՐԱՊԵՏԸ

## ԳՆԱՐԱՏԱՆՔ՝ ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ ՈՒ ՀԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԵԱՆ

- «ԿԻԼԻԿԵԱՆ ԻԾԽԱԼ» ԾՔԱՆԾԱՆ՝ ԲԱՐԵՐԱՐ ՕՍԿՕ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այժմու այցելութեան առիթով, բազմիցս պերճախօս արտայայտութիւն գտաւ այն ճշմարտութիւնը, թէ Յայ Դպրոցը, անոր ծառայող սպասարկուները, հայ աշակերտն ու մասումը, նա՛եւ Յայ Դպրոցին սատարող բարերարները յատուկ տեղ ունին Նորին Ս. Օծութեան հոգածութեան մեջ եւ ան գիտէ ըստ արժանույն գնահատել զանոնք, որովհետեւ Յայ Դպրոցն ու մեր Եկեղեցին կը կազմեն մեր ազգի պահպանման ու գոյատեման գլխաւոր յենարանները, ապագայի կերտման գրաւականները:

Այս իրողութիւնը գործնական արտայայտութիւն գտաւ Շաբաթ, 15 Յոկտեմբերի Երեկոյեան, Ազգ. Ֆերահեան վարժարանի »Աւետիսեան« սրահին մեջ տեղի ունեցած ճաշկերոյթ-հանդիպումի մը ճամբով: Երեկոն կազմակերպուած էր Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարնինին կողմէ, գործակցութեամբ Ազգ. Վարժարաններուն: Այսպէսով, մեր կրթական համակարգը կ'ուզէր պատիւի իր բաժինը ընծայել հովուապետին, վայելել անոր Ներկայութիւնն ու լսել յորդորները, պատգամը:

Շուրջ հինգ հարիւր հայորդիսեր ընդառաջած էին նախաձեռնութեան. հրաւիրուած էին մեր վարժարաններու դաստիարակները, առ ի գնահատանք անոնց անձնիիր ծառայութեանց ու հայկական ուսումնարանին առանցքը կազմելու անոնց արժանիքին: Նիւրընկալութիւնը յանձն առած էր Տէր Եւ Տիկին Օսկօ Եւ Երան Կիրակոսեան բարերար ամոլը:

Վեհափառ Յայրապետը սրահ ժամանեց ընկերակցութեամբ Թեմիս բարեհսամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Աղք. Մարտիրոսեանի Եւ յոտնկայս ծափողչոյններով դիմաւորուեցաւ Ներկաներուն կողմէ: Ներկայ էին միաբան ու քահանայ հայրեր, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Եւ Թեմիս ժողովականութեան Ներկայացուցիչներ, Յ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի Ներկայացուցիչն ու անդամներ, Խնամակալ Մարմինի անդամներ,

վարժարաններու տևորէններ եւ ուսուցիչներ, կուսակցական ու միութենական ներկայացուցիչներ եւ աշակերտներու ծնողներ:

Ճաշի սեղանի շուրջ ստեղծուեցաւ մտերմիկ մթնոլորտ, որուն յաւելեալ համեմ տրամադրեցին աշակերտական պարեր ու երգեր: Խօսք առին Խնամակալ Մարմինի ատենապետ Տիար Մարք Կետիկեան եւ Ազգ. Ֆերահեան վարժարանի տևորէն Տիար Ժան Գուաքեան, որ յանձն առած էր հանդիսավարութիւնը: Ան հանդէս եկաւ Վեհափառ Յայրապետին, Առաջնորդ Սրբազնին ու ներկաներուն ուղղուած ողջոյնի խօսքով, եւ լուսարձակի տակ բերաւ Նորին Ս. Օծութեան հովուապետական այցելութեան գլխաւոր նպատակները՝ հոգեւոր վերանորգում, Յայ Դպրոցի դերին վերաշխուժացում եւ մեր Դատին ի նպաստ աշխատանքներուն, պայքարին հզօրացում: Ան յիշեցուց, որ Վեհափառ Յայրապետը 2011 տարին ծօնած է Յայ Մանուկին, իսկ մանուկ ըսելով կը հասկնանք ապագայի Երիտասարդ սերունդը, որ կարիքն ունի հայեցի դաստիարակութեան ու որակաւոր ուսումի: Ան նկատեց, որ Վեհափառ Յայրապետը անձամբ՝ իր այս այցելութեամբ կը մարմնաւորէ իր առաջադրանքները եւ կ'աշխատի ապահովել դաստիարակչական այս աշխատանքին նիւթական միջոցները: Յանդիսավարը նաեւ նկատել տուաւ, որ Յայ Կինն ու Յայ Ընտանիքն ալ առանցքային տեղ ունին Վեհափառի հոգածու վերաբերմունքին մէջ, իսկ հայ ընտանիք ըսելով՝ կը հասկցուի նաեւ հայ հաւաքականութիւնը՝ Յայաստանի մէջ ու Սփիւռքի. ան յիշեցուց, որ Վեհափառ Յայրապետը վերջերս անգամ մը եւս հայաստանաբնակ մեր անտեսուած ու կեղեքուած ժողովուրդին կարիքներուն ի նպաստ արտայայտութիւն ունեցաւ, միաժամանակ քննադատելով արտագաղթի ալիքները, անդրադարձաւ Վեհափառ Յայրապետին այն աշխատանքներուն, որոնք ի գործ դրուած են մեր ազգային իրաւունքներուն հետապնդման համար, միջազգային բեմերու վրայ: »Վեհափառը մեծ դաստիարակ մըն է, դաստիարակ՝ բոլոր դաստիարակներուն«, բնորոշեց Տիար Գուաքեան ու հրաւիրեց Առաջնորդ Սրբազնը, որպեսզի ներկայացնէ Վեհափառ Յայրապետը:

Առաջնորդ Սրբազնը ողջունեց ներկաները, հակիրճ կերպով անդրադարձաւ հովուապետական այցելութեան սկսումն ետք, շուրջ 10 օրուաւ ընթացքին արձանագրուած հանդիսութիւններուն, արարողութեանց ու հանդիպումներուն, որոնք տարբեր միջոցներով մարմնաւորումը եղան Վեհափառ Յայրապետի առաջադրանքներուն ու հոգածու վերաբերմունքին: Ան գնահատանքի խօսք ուղղեց հայ դաստիարակներուն, միաժամանակ դրուատելով ու ողջունելով այն հայորդիները, որոնք նեցուկ կը կանգնին հայ դպրոցին ու հայ ուսուցիչին առաքելութեան: Առաջնորդ Սրբազնը մասնաւորաբար կանգ առաւ օրուաւ հիւրընկալութիւնը յանձն առած բարերար ամոլին նուիրաբերումին վրայ, նկատել տալով, որ այս վարժարանին շրջափակէն ներս մտնողը, Ազգ. Առաջնորդարան այցելողն ու մեր հաւաքական կեանքին հետեւողներ վկայ են բարերար ամոլին անսակարկ նուիրաբերումներուն: Ան յայտնեց, թէ այս իրականութեան քաջածանօթ Վեհափառ Յայրապետը որոշած է այս երեկոյ «հիլիկեան իշխան» շքանշանով պատուել ու վարձատրել բարերարները:

Պարգևատրումը կատարուեցաւ Վեհափառ Հայրապետին ձեռամբ:  
Նորին Ս. Օծութիւնը դրուատիքով արտայայտուեցաւ Կիրակոսեան  
ընտանիքին ու ընդհանրապէս Հայ Դպրոցին ու Եկեղեցւոյ զօրակցող  
ազայիններուն մասին, ապա նաեւ հանգամանօրէն անդրադարձաւ Հայ  
Դպրոցին ու Հայ Դաստիարակին առաքելութեան: Ան անգամ մը Եւս  
հաստատեց, թէ Հայ Դպրոցը կենսական կարեւորութիւն ունի մեր ազգային  
կեանքին մէջ, իսկ դպրոցին հիմք կը կազմէ հայ ուսուցիչը, որ  
առաքելութիւնը ունի իբրեւ մարդ ու իբրեւ հայ կերտել նորահաս  
սերունդները: Նորին Ս. Օծութիւնը մտահոգութիւն յայտնեց, որ որակաւոր  
ուսուցիչներու թիւը չի համապատասխաներ կարիքին, նաեւ Լիբանանի մէջ  
զգալի կը դառնայ այս վիճակը. տակաւին, հայ մանուկներ հեռու կը  
պահուին մեր դպրոցներու հայացնող մթնոլորտեն, ինչ որ կը տանի  
այլասեռումի ու հայութենէ պարագումի, մինչդեռ Հայ Դպրոցն է որ պիտի  
ապահովէ մեր վաղուան սերունդներուն հայօրէն աճումը:

## **PRELACY SCHOOLS BANQUET IN HONOR OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I**

### **- OSKO KARAGHOSSIAN AWARDED THE "PRINCE OF CILICIA" MEDAL**

On the evening of Saturday, October 15, 2011, nearly five hundred community members gathered at "Avedessian" Hall for a banquet in honor of His Holiness Catholicos Aram I. The banquet was organized by the Board of Regents, in conjunction with Prelacy Schools. The evening's hosts were Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian.

His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, arrived at the hall where he was greeted with a standing ovation and great applause from the guests. In attendance were Clergy and Council members, Board of Regents members, Principals, Directors, and faculty of Prelacy Schools, parents, and members of sister organizations.

Welcoming remarks were delivered by Board of Regents Chair Mr. Mark Gedikian, and Principal John Kossakian, who was also the Master of Ceremonies. Mr. Kossakian reflected on the three themes of the Pontifical Visit, which are spiritual renewal, reinvigorating Schools and the Armenian Cause, and the invaluable role His Holiness has had and continues to have in all three arenas. He lauded His Holiness as "a great educator, an educator of educators" and invited the Prelate for his remarks.

The Prelate commended Armenian educators and all those who lend their moral and financial support to the unique mission of Armenian schools and Armenian teachers. He spoke highly of the unwavering and generous support of the evening's host, the Karaghossian family, who have contributed significantly to our community, and announced that in recognition of their benevolence, His Holiness would be awarding them the "Prince of Cilicia" medal.

After awarding them the "Prince of Cilicia" medal, His Holiness commended the Karaghossian family for their support of Armenian Schools. Speaking on the role of Armenian Schools and teachers, His Holiness stated that the Armenian School is the livelihood of our community and the foundation of the school are the teachers who have the mighty responsibility of instructing our youth on becoming good people and good Armenians. He expressed concern on the need for more Armenian teachers, here and in Lebanon as well, and for more Armenian students to attend Armenian Schools.